



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
 ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐԱ ՆԱՃԱՐԵԱՆԸ**

Ուրբաթ, 18 Մայիսի կեսօրին, Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի 35րդ նստաշրջանին, Ազգային Առաջնորդարան այցելեց Կլենտեյլի նորընտիր քաղաքապետ Արա Նաճարեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղան նաեւ Ազգային Վարչութեան անդամներ:

Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնք քաղաքապետին անդրանիկ այցելութիւնը ըլլալով, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականները յարգելի հիւրին ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին հաստատութեան տարբեր բաժանմունքներուն, իրագործուած աշխատանքներուն ու յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Թեմիս Ազգային Երեսփոխանական Ժողովի 35րդ նստաշրջանին բացման պահուն Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները հիւր քաղաքապետը հրաւիրեցին «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահ, ուր համախմբուած էին Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամները: Արա Նաճարեան ճաշի հիւրն ու սեղանակից եղաւ Առաջնորդ Սրբազանին ու ժողովականութեան ներկայացուցիչներուն: Առաջնորդ Սրբազանին ողջոյնի խօսքին ընդառաջելով, հիւր քաղաքապետը շնորհաւորեց բոլորը՝ Ազգ. Առաջնորդարանի շէնքի ծրագիրին ամբողջացման առիթով ու պատրաստակամութիւն յայտնեց իր կարելիութեան սահմաններուն մէջ նեցուկ կանգնելու Ազգային Առաջնորդարանին՝ որեւէ ձեւի ծառայութեամբ: Ապա նաեւ յաջողութիւն մաղթեց ժողովականներուն՝ իրենց ժողովական աշխատանքներուն համար:



**GLENDALÉ MAYOR ARA NAJARIAN VISITS THE PRELACY**

On the afternoon of Friday, May 18, the day of the Prelacy 35<sup>th</sup> National Representative Assembly, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and members of the Executive Council welcomed newly elected mayor of Glendale Ara Najarian to the Prelacy. Given that it was the mayor’s first visit to the new building, the Prelate and council members acquainted him with the

different departments that make up the Prelacy and conveyed to him the nature of past activities and future plans.

The Prelate and council members invited Mayor Najarian to the opening of the Assembly at "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where delegates were assembled. Following the Prelate's welcoming remarks, the mayor offered his congratulatory remarks on the completion of the new headquarters and expressed his backing, support and readiness to serve the Prelacy and concluded by wishing success to the proceedings of the Assembly.